

տուգեցին 'ի Նէպի Էֆէնտեայ, որ Վերատեսուէն էր գործոյն, այլ ոչ բաւականացան այնու. գրեցաւ հրովարտակ ուղղեալ առ Կուսակալն Սիդոնի եւ առ Բդեշխն եւ Դատաւորն Երուսաղէմի, զի բազմութեամբ եւ առանց կողմնակցութեան քննեացեն եւ վերահասու լեալ իրացն փութանակի ծանուցեն 'ի Դուռն: Եւ Զիւլգատէ, Եւ Երմիայ:

Այսոքիկ խնդիրքս հասանեն մինչեւ ցայս վայր, այնուհետեւ չերեւին գրութիւնք ինչ, թէ որպիսի եղանակաւ պատասխանի ետուն Բդեշխն եւ Դատաւորն, եւ թէ ո՞ր աղագաւ լուեալ դադարեցին միաբանք Հայոց՝ յետ այսքան տառապանաց եւ աշխատութեանց եւ մեծագումար ծախուց, զի խնդիրքն Հայոց խափանեալ մնացին իսորաւ, եւ կանթեղք եւ այլ իրք Յունաց մնացին 'ի տեղւոջ իւրեանց, պատճառ ո՛չ այլ ինչ գտանեմք, եթէ ոչ տարաժամ մահ Զաքարիա Պատրիարքի, եւ խուլութիւն ազգայնոց 'ի Կոստանդինուպօլիս:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ը .

Պաշտօնակար Ս. Յարութեան : Վէճ՝ Յունաց վրան եկեղեցւոյն Ս. Յովհաննու : Կայսերական նշան Ռուսաց եւ Օսմանցւոց : Վախճան Զաքարիայ Պատրիարքի :

ՅԱՂԱԳՄ անդորրութեան եւ ապահովութեան ուխտաւորաց, յառաջագոյն որդի Փոխարքային Եգիպտոսի Իսրահիմ Փաշա, տուեալ էր բանալ զմի փեղի դրան Տաճարին Ս. Յարութեան, զի այնպէս օրինադրեալ էին 'ի Ժամանակս Մէլիք Սալահատտինի, եւ յաղագս բառնալոյ զայլ անկարգութիւնս այլազգի դռնապանաց խնդրեալ էին Գըլխաւորք Քրիստոնէից 'ի Տէրութենէ. 'ի հասանիլ այսր հրովարտակի յերուսաղէմ, կոչեցան դռնապանքն 'ի դատարան, ուր էին Փոխանորդն Հայոց, Կիրակոս Եպիսկոպոս եւ Յունացն Քիրիլոս. յետ ընթեռնելոյ զայն, խորհեցան բարեք կարգաւորել զպաշտօն նոցա, չափանշել այնուհետեւ յուխտաւորաց իրրեւ մուսք մի մի փարայ, զի